ՀՏԴ 342,4

Իրավունք

**Նորիկ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ԵՀՀ միջազգային հարաբերությունների և իրավագիտության ինստիտուտի դասախոս, ՀՀ ԶՈՒ № զորամասի օպերատիվ բաժանմունքի ավագ սպա, կապիտան**
**E-mail: norik.shaxnazaryan@yandex.ru, 055021020**

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ՝ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

*Հոդվածը նվիրված է սահմանադրության և հերմենևտիկայի տեսական, կիրառական հարցերին: Մասնավորապես համակողմանի վերլուծության են ենթարկվել իրավաբանական և սահմանադրական հերմենևտիկայի հասկացությունն ու նշանակությունը:*
*Հետազոտության առարկան է՝ ժամանակակից սահմանադրության հասկացությունը, առանձնահատկությունները և զարգացման միտումները:*
*Հոդվածի նպատակն է բացահայտել սահմանադրական հերմենևտիկայի հասկացությունը, էությունը և բովանդակային առանձնահատկությունները, պարզաբանել նրա անմիջական գործադրման տեսական և կիրառական նշանակությունը իրավակարգավորումների որոտում:*
*Գիտական նորույթը կայանում է նրանում, որ հոդվածում առաջին անգամ մանրակրկիտ բացատրություն է տրվում հերմենևտիկայի ծագմանը և կիրառմանը իրավագիտության մեջ, համակարգված մեթոդաբանությամբ վերլուծության է ենթարկվում սահմանադրական հերմենևտիկայի տեսական – կիրառական և ամբիվալենտային բնույթը:*
***Բանալի բառեր՝*** *սահմանադրական հերմենևտիկա, իրավաբանական հերմենևտիկա, սահմանադրական վերահսկողություն, սահմանադրական մեկնություն, իրավական*

*ակտերի սահմանադրականության դատական վերահսկում, սահմանադրական ինտերպրետացիա, սահմանադրական նորմեր, իրավաբանական կոնֆլիկտ, սահմանադրական – իրավական ինստիտուտներ:*

***Н. Шахназарян***

## *КОНСТИТУЦИЯ И ГЕРМЕНЕВТИКА ПО ТЕОРЕТИЧЕСКИМ И ПРИКЛАДНЫМ ВОПРОСАМ*

*Статья посвящена теоретическим и прикладным вопросам конституции и герменевтики. В частности, всесторонне проанализированы понятие и значение правовой и конституционной герменевтики.*

*Предметом исследования являются понятие, особенности и тенденции развития современной конституции.*

*Цель статьи - раскрыть понятие, сущность и содержательные особенности конституционной герменевтики, разъяснить теоретическое и прикладное значение его непосредственного применения в области правового регулирования.*

*Научная новизна заключается в том, что в статье впервые дается обстоятельное объяснение зарождения и применения герменевтики в юриспруденции, при систематической методологии анализируется теоретико–прикладной и амбивалентный характер конституционной герменевтики.*

***Ключевые слова:*** *конституционная герменевтика, юридическая герменевтика, конституционный контроль, конституционное толкование, судебный контроль конституционности правовых актов, конституционная интерпретация, конституционные нормы, правовой конфликт, конституционно – правовые институты.*

***N. Shahnazaryan***

## *CONSTITUTION AND HERMENEUTICS ON THEORETICAL AND APPLIED ISSUES*

*The article is devoted to theoretical and applied issues of constitution and hermeneutics. In particular, the concept and meaning of legal and constitutional hermeneutics are comprehensively analyzed.*

*The subject of research is the concept, features and tendencies of the development of the modern constitution.*

*The purpose of the article is to reveal the concept, essence and substantive features of constitutional hermeneutics, to explain the*

*theoretical and practical significance of its immediate application in the field of legal regulation.*

*The scientific novelty lies in the fact that for the first time the article provides a thorough explanation of the origin and application of hermeneutics in jurisprudence, the theoretical–applied and ambivalent nature of constitutional hermeneutics is analyzed with a systematic methodology.*

***Key words:*** *constitutional hermeneutics, legal hermeneutics, constitutional control, constitutional commentary, judicial control of the constitutionality of legal acts, constitutional interpretation, constitutional norms, legal conflict, constitutional - legal institutions.*

Ժամանակակից սահմանադրականության տեսությունը հիմնվում է մեկնաբանական մեթոդաբանությունների վրա[1], որոնք առաջարկում են սահմանադրական տեսության իմաստավորում՝ սահմանադրական նորմերի մեկնաբանման և կիրառման տեսակետից: Լայն իմաստով, մեկնաբանական մեթոդաբանությունները ներկայացնում են մեթոդների հավաքածու, որոնք բացատրում են սահմանադրական-իրավական առանձին ինստիտուտների զարգացման հարաշարժությունը, դերն ու նշանակությունը, նրանց փոխադարձ կապը սահմանադրական և այլ իրավահարաբերությունների իրագործման ընթացքում: Նեղ իմաստով՝ դա սահմանադրական մեկնաբանման եղանակների, ձևերի, տեսությունների համակարգ է, որը կիրառվում է սահմանադրության դատական և այլ մեկնաբանությունների ընթացքում: Մեկնաբանական մեթոդաբանությունները ցույց են տալիս, որ գոյություն ունի որոշակի կապ գրավոր իրավական ակտի՝ սահմանադրության և հերմենևտիկայի միջև:

Որպես տեքստերի մեկնաբանման արվեստ և տեսություն՝ հերմենևտիկան մշակվում և կիրառվում է հասարակագիտության տարբեր

---

[1] *Տվյալ աշխատության մեջ բանավիճային կարգով առաջարկվում է երկու մոտեցում «մեկնաբանական մեթոդաբանություններ» հասկացության վերաբերյալ, քանզի մեր իրավագիտության մեջ բացակայում է «interpretive methodologes» հաստատուն բառակապակցությունը: Տվյալ տերմինը մենք փոխ ենք առել Կալիֆոռնիայի համալսարանի (Սան Ֆրանցիսկո) կողմից հրապարակվող և սահմանադրական իրավունքի հարցերին նվիրված ամսագրից, որի թեմատիկ թողարկումը վերնագրված է «Մեկնաբանական մեթոդաբանություններ. սահմանադրական իրավունքի հեռանկարները» և ներառում է զանազան հոդվածներ ամերիկյան վաղ սահմանադրական բանավեճերում ժողովրդավարական ինքնիշխանության հայեցակարգի զարգացման, սահմանադրության դատական գերակայության և ոչ դատական մեկնաբանման և այլ հարցերի մասին (Hetings Constitutional Law Quarterly. 1997. Vol. 24, N 2, էջ 281-664:*

բնագավառներում՝ փիլիսոփայության, բանասիրության, հոգեբանության, իրավունքի մեջ: Դրա արմատները գալիս են աստվածաբանությունից (Աստվածաշնչի մեկնություններ և եկեղեցու հայրերի գործեր) և հունական դիցաբանությունից: «Հերմենևտիկա» տերմինը հին հունական ծագում ունի: Որոշ գիտնականներ կապում են այն Հերմեսի՝ աստվածների կամքը փոխանցող սուրհանդակի անվան հետ,[1] մյուսները՝ hermeneuein բայի հետ, որը սովորաբար թարգմանվում է «մեկնել», բացատրել», «թարգմանել» արտահայտություններով, կամ էլ hermeneia գոյականի հետ, որը նշանակում է՝ «մեկնել», «մեկնաբանել» (այս հասկացությունն օգտագործվում է նաև «սրբազան գիր», «հաղորդում», «պատվիրան» իմաստով)[2]:

Հերմենևտիկան սովորաբար ընկալվում է որպես մեկնաբանման ընդհանուր սկզբունքների հետազոտություն, ընդ որում՝ նաև տեքստերի մեկնություն: Հերմենևտիկ հետազոտությունն այլևս չի սահմանափակվում միայն այն կանոնների ձևակերպմամբ, որոնց օգնությամբ հնարավոր է կատարել մեկնաբանություն: Այն այսօր ընդգրկում է նաև մարդկային հասկացման բուն պայմանների հետազոտումը[3]:

Հերմենևտիկայի և իրավագիտության փոխկապվածությունն արտահայտվում է, ամենից առաջ, իրավունքի տարբեր ինստիտուտների և աղբյուրների մեկնաբանման մեջ, որոնք վերաբերում են ինչպես պատմական իրավական փաստաթղթերին, այնպես էլ ներկայումս գործող զանազան իրավական ակտերին[4]: Իրավաբանական հերմենևտիկայի տարա-տեսակներից է գրավոր սահմանադրության մեկնաբանումը, որն առանցքային դիրք է գրավում գրավոր նորմատիվ իրավական ակտերի համակարգում[5]:

«Իրավաբանական հերմենևտիկա» եզրույթը բավական տարածված է և կիրառվում է տարբեր իրավական ակտերի (ինչպես գործող, այնպես էլ պատմության գիրկն անցած) տեքստերի մեկնաբանումների բնութագրման համար: Հետևաբար, իրավաբանական հերմենևտիկան ուսումնասիրում է գրավոր տեքստի մեկնումն ու նշանակությունը, այդ պատճառով էլ այն

---

[1] *Տե՛ս* ***Грейс Р.****, Мифы Древней Греции / Под ред. и с послесл. А. А: Тжо-г. 1992, с.44-47.*

[2] *Տե՛ս* ***Inwood M.****, Hermeneutics // Routledge Enciclopedia of Pilosophy CD-ROM / General Editor Ed. Craig. Version 1.0 London, 1998; Palmer R. E. Hermeneutic: Interpretation theory in :JSchleiermacher, Dilthey, Heidegger, and Gadamer. Evanston, 1969, p. 12.*

[3] *Տե՛ս* ***Leyh G.****, Toward a Constitutional Hermeneutics // American Jomal of Political Science/ 1988.vol 32, p.372.*

[4] *Մասնագիտական գրականության մեջ հերմենևտիկան, որպես կանոն, կապում են իրավունքի մեկնման ընդհանուր գործընթացի հետ (Տես՝* ***Суслов*** *В, В. Герменевтика и юридическое толкование // Государство и право. 1997, N* ***6****, с. 115-118).*

[5] *Տես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը:*

կարելի է բնորոշել որպես տեքստուալ առարկա, որը սկիզբ է առնում հունական և հռոմեական իրավունքի դասական կոդիֆիկացիաներից[1]:

Իրավագիտության մեջ իրավաբանական հերմենևտիկան կոչված է ձևավորելու իրավական ակտերի մեկնման տեսությունն ու մեթոդները: Արդի փուլում դա ունի ոչ միայն ճանաչողական նշանակություն, այլև ծառայում է իրավական նորմերի, սկզբունքների և ինստիտուտների իրագործման գործնական նպատակներին: Իրավագիտության մեջ իրավունքի կամ օրենքի մեկնման խնդիրը դիտարկվել է, ամենից առաջ, իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում, իսկ մի շարք դեպքերում՝ իրավական նորմերի կամ էլ իրավունքի առանձին ճյուղերի (որպես կանոն՝ քաղաքացիական և քրեական) կիրառման տեսության շրջանակներում: XIX դարում իրավունքի տարբեր ձևերի (աղբյուրների) մեկնման հարցերի ուսումնասիրությամբ էին զբաղվել այնպիսի իրավագետներ, ինչպիսիք են Ե. Վ. Վասիլկովսկին, Ա. Դ. Գրադովսկին, Ն. Մ. Կորկունովը[2]: Խորհրդային դարաշրջանում իրավունքի մեկնման հիմնահարցերը մշակվում էին Ա. Բ. Վենգերովի, Ն. Ն. Վոպլենկոյի, Տ. Յա. Նասիրովայի, Ա. Ս. Պիգոլկինի, Ա. Ֆ. Չերդանխի և այլ գիտնականների կողմից[3]: Ընդհանուր առմամբ մեկնման հիմնախնդիրը հատուկ է այն իրավական համակարգերին, որոնցում իրավական նորմն ընկալվում է որպես վարքի ընդհանուր կանոն, իսկ նրա մեկման էությունը հասկացվում է որպես հստակ դեպքի հարմարեցում համընդհանուր օրենքին: Սահմանադրական նորմերին մյուս բոլոր նորմերից ավելի հատուկ է ընդհանուր բնույթը: Սահմանադրության մեջ առավել հաճախ են սկզբունք-նորմերը, նպատակ-նորմերը, խնդիր-նորմերը՝ դրանք բոլորն էլ կրում են ընդհանուր-կարգավորիչ բնույթ: Սահմանադրական նորմերի մեկնության պահանջը պայմանավորված է դրանց ոչ միանման ընկալմամբ և իրավաստեղծության կամ իրավակիրառման գործընթացում ոչ նույնանման իրագործմամբ: Հերմենևտիկ ջանքերը կոչված են վերացնելու այդպիսի բազ-

---

[1] Տե՛ս **Goodrich P.,** *Legal hermeneutics // Routledge Enciclopedia of Pilosophy CD-ROM; Legal Hermeneutics: History, Theory, fnd Pracvtice / Ed. by G. Leyh. Los Angeles; Berkeley (CA),1992.*

[2] Տե՛ս **Васьковский Е. В. ,** *Цивилистическая методология. Ч. 1: Учение о толковании и применении гражданских законов. Одесса, 1901; М., 2002;* **Градовский А. Д.** *О судебном толковании законов по русскому праву 7/ Собр. соч. Т. 7. СПб, 1907, с. XXI-LVIII;* **Коркунов Н. М.** *Лекции по общей теории права. 8-е изд. СПб., 1909*

[3] Տե՛ս **Венгеров А. Б.,** *О прецеденте толкования правовой нормы // Ученые записки ВНИИСЗ. Вып. 6. М., 1966, с. 3-8;* **Вопленко Н. Н. ,** *Официальное толкование норм права. М., 1976;* **Насырова Т. Я.** *Телеологические (целевое) толкование советского закона. Казань, 1988;* **Пиголкин А. С.,** *Толкование нормативных актов в СССР. М., 1962;* **Черданцев А. Ф.** *Толкование советского права. М., 1979.*

միմաստությունը: Դրա հետ մեկտեղ իրավաբանական հերմենևտիկայի զուտ տեխնիկական ընկալումը՝ որպես «բացառապես օրինականացված իրավակարգին աջակցելու նպատակ հետապնդող գիտություն», ըստ ամենայնի, թվում է միակողմանի[1]: Հերմենևտիկան ծառայում է սահմանադրական նորմերի ճիշտ (ճշմարիտ) մեկնմանը և կիրառմանը: Իրավական նոր համակարգի ստեղծման կամ հին համակարգի փոփոխման պայմաններում հերմենևտիկան ունակ է կատարելու նաև վերափոխիչ գործառույթ:

**Սահմանադրական հերմենևտիկայի հասկացությունն ու հատկանշանները:** «Սահմանադրական հերմենևտիկա» հասկացությունն օգտագործելի է ամերիկյան սահմանադրական տերմինաբանության մեջ «սահմանադրական մեկնաբանում» հասակցության հետ մեկտեղ, սակայն ազգային իրավական ավանդույթում մինչև վերջերս կիրառելի չէր: Սահմանադրական մեկնման զանազան մեթոդներ և տեսություններ լայնորեն քննարկվում են ամերիկյան սահմանադրական իրավունքում, այդ թվում դատական գործունեության, դատական իրավաստեղծության համատեքստում՝ կիրառվելով մեկնման տարբեր սուբյեկտների, սահմանադրության պատմական զարգացման, ժամանակակից պետական զարգացմանը ԱՄՆ-ի հիմնադրամների հայտերի մտադրությունների համապատասխանության վերաբերյալ[2]:

Սահմանադրական դրույթների և սահմանադրական մեկնման սահմանների վերահիմաստավորումը կապված է, որպես կանոն, հասարակական զարգացման ուղղության փոփոխման կամ սոցիալական և տեխնիկական առաջընթացի այնպիսի նոր գործոնների ծագման հետ, որոնք չէին կարող հայտնի լինել 18-րդ դարի վերջերին[3]:

Ու թեև սահմանադրական մեկնումը (ինտերպրետացիան) սահմանադրական հերմենևտիկայի տարատեսակ է, գոյություն ունեն միայն իրեն բնորոշ հատկություններ, որոնք բնութագրվում են կիրառվող

---

[1] *Տե՛ս* ***Гадамер Г. Г.,*** *Риторика и герменевтика // Гадамер Г. Г. Актуальность прекрасного. М., 1991, с. 191.*

[2] *Տե՛ս* ***Ball T.,*** *Constutional Interrelation fnd Conceptual Change // Legal Hermeneutics: History, Theory, fnd Pracvtice / Ed. by/G. Leyh. Berkeley (CA), 1991, p. 129-146; Leyh G. Toward a Constitutional Hermeneutics, p. 369-387*

[3] *Տե՛ս* ***Friedman D., Smith S. D****. The Sedimentary Constitution // Uneversity of Pensilvariia Law Rewiev. 1998. November. Vol 147. Issue I,® 1-90;* ***Peabody B. G.****, Nonjudicial Constitutional Interpretation, Autoritative Settlment, and a New Agenda for Research // Constutional Commentary. 1999. Spring. Vol. 16. Issue 1, p. 63-90;* ***Whittington K. E.****, Dworkin's "Originalism": The Role of Intentions in ConstitutionaHpterpretation // Review of Politics. 2000. Spring. Vol. 62. Issue 2, p. 197-229.*

ընթացակարգերով՝ երկրի իրավական համակարգի վրա ներգործությամբ և իրավաբանական հետևանքներով, որոնք դուրս են գալիս զուտ սահմանադրական իրավունքի շրջանակներից դեպի իրավունքի այլ ճյուղեր ու բնագավառներ: Մեկնումային գործունեությանն առավել բնորոշ է ինչպես ռոմանոգերմանական, այնպես էլ անգլոսաքսոնական իրավական համակարգի պայմաններում գործող ժամանակակից ինդուստրիալ ժողովրդավարական պետությունների համար: Հենց այդ պատճառով էլ ժողովրդավարացման և իրավական համակարգի բարեփոխման պայմաններում սահմանադրական նորմերի մեկնումը հանդիսանում է իրավական կարգի սահմանադրականացման կարևորագույն գործոններից մեկը:

Սահմանադրական հերմենևտիկան սահմանադրության նորմերի մեկնման արվեստն ու տեսությունն է՝ սահմանադրական արդարադատության կամ սահմանադրական վերահսկողության մարմնի կողմից զանազան գործառույթների իրագործման և կատարման ընթացքում, ինչպես նաև սահմանադրական արդարադատության ոլորտի մեջ մտնող տարբեր տեսակի նորմատիվ-իրավական ակտերի սահմանադրական իմաստի ու նշանակության փիլիսոփայական և տեսական-իրավական հիմնավորումը և բացահայտումը:

Մյուս եզրույթները՝ «սահմանադրական մեկնում» կամ «սահմանադրական ինտերպրետացիա», որոնցից նույնպես ստիպված ենք օգտվել, ունեն իրավաբանական հատուկ բովանդակություն և կարող են կիրառվել մի քանի իմաստներով: Ժամանակակից սահմանադրական տեսության մեջ դրանք նշում են. ա) սահմանադրական նորմերի իմաստի և բովանդակության պարզաբանման տեսություն, բ) պետական իրավասու մարմնի կողմից իրավունքի տարբեր սուբյեկտներին սահմանադրական դրույթների բացատրման իրավաբանական ընթացակարգ, գ) սահմանադրական իրավունքի ինստիտուտ, որը ներառում է սահմանադրական պաշտոնական մեկնման մասին գործերի քննումը և դրանց իրավաբանական հետևանքները կարգավորող սահմանադրական նորմերի, օրենքների և այլ ակտերի ամբողջականությունը:

Առանձնացնենք սահմանադրական հերմենևտիկայի հիմնական հատկանիշները, որոնք ելակետային են նրա բնույթի և իրավական համակարգում տեղի ու նշանակության բացահայտման առումով:

1. Սահմանադրական հերմենևտիկային հատուկ է *ամբիվալենտային* բնույթ: Սահմանադրական նորմերի մեկնությունն ունի խառը քաղաքական-իրավական բնույթ և իրականացվում է որոշակի մշակութային և գաղափարախոսական համատեքստում: Սահմանադրության մեկնման

արդյունքները միշտ էլ արտահայտություն են իրավական որոշակի քաղաքականության, որն իրականացնում է պետական այն մարմինը, որն օժտված է տալու հեղինակավոր և իրավունքի այլ սուբյեկտների համար պարտադիր մեկնաբանություններ: Ընդ որում, քաղաքական և մշակութային տարբեր պայմաններում սահմանադրական միևնույն դրույթի մեկնումները կարող են ունենալ մի դեպքում դրական, իսկ մեկ այլ դեպքում՝ բացասական արդյունքներ:

2. Սահմանադրական հերմենևտիկան օգտագործում է փիլիսոփայական և իրավական *տարբեր* կատեգորիաներ: Այսպես, «պոզիտիվ» և «նեգատիվ» ազատության կատեգորիաները կիրառվում են սահմանադրության մեջ ամրագրված հիմնական իրավունքների ու ազատությունների բովանդակության պարզաբանման համար: «Ժողովրդական ինքնիշխանություն» (սուվերենություն), «պետական ինքնիշխանություն», «իշխանությունների տարանջատում» կատեգորիաներն օգտագործվում են Հիմնական օրենքով սահմանված պետական մարմինների ձևավորման և գործունեության կարգի վերլուծման համար: Անշուշտ, մեկնման գործընթացի մեջ ներգրավվում են, առաջին հերթին, սահմանադրական-իրավական կատեգորիաները, որոնք բովանդակային կորիզ են սահմանադրական ցանկացած դրույթի համար: Միևնույն ժամանակ, սահմանադրական հերմենևտիկան մեկնման գործընթացի մեջ է ներառում իրավունքի զանազան ճյուղեր և դրանց համապատասխանող կատեգորիաներ՝ միջազգային-իրավական, քաղաքացիական-իրավական, քրեական-իրավական, ընտանեկան-իրավական, դատավարական-իրավական և այլն: Սահմանադրական հերմենևտիկայի մեջ կիրառվող կատեգորիաների *բազմաճյուղային* բնույթը բացատրվում է սահմանադրությամբ կարգավորվող հասարակական հարաբերությունների ընդգրկման լայնությամբ:

3. Սահմանադրական հերմենևտիկան ենթադրում է նորմերի և սկզբունքների *արժեքորեն կողմնորոշված* մեկնություն: Սահմանադրության վերաբերյալ հերմենևտիկ ջանքերի կիրառումը միշտ հիմնված է սահմանադրական (հակասահմանադրական) որոշակի արժեքների վրա: Մեկնության շնորհիվ ստեղծելով սահմանադրական արժեքների հեղինակավոր պատկեր սահմանադրական հերմենևտիկան հարթել է համաձայնեցման ենթակա արժեքների կոնֆլիկտը: Այդ եղանակով պարզաբանվում են նաև սահմանադրական արժեքների փոխկապվածություններն ու որոշակի հիերարխիան:

4. Սահմանադրական հերմենևտիկան ունի *տեսական-կիրառական* բնույթ, քանի որ բացատրում է իրավական երևույթները իրավական կար-

գավորման կամ իրագործման մեխանիզմի համատեքստում: Սահմանադրական մեկնման ընթացքում ընդհանուր սկզբունքները կամ առանձին նորմերը բացատրվում են ոչ միայն համապարտադիր դրույթների իմաստը բացահայտելու համար, այլև հստակեցվում են իրավունքի կոնկրետ սուբյեկտների կողմից դրանց կիրառման հնարավորությունները: Դրանով է պայմանավորված այն, որ սահմանադրական հերմենևտիկան օժտված լինելով բարձր տեսության հատկանիշներով, միաժամանակ ունակ է ազդել ֆիզիկական և իրավաբանական տարբեր անձանց և պետական մարմինների վրա:

5. Սահմանադրական հերմենևտիկան պարզաբանում է իրավական մտածողությունը՝ ցույց տալով սահմանադրության և իրավական համակարգի այլ տարրերի կառուցվածքային և գործառույթային փոխկապակցությունները՝ սահմանադրության տեքստի, իրավունքի զանազան ճյուղերի նորմերի, ինչպես նաև իրավունքների, ազատությունների, պարտականությունների և լիազորությունների իրագործման ընթացքում իրավունքի տարբեր սուբյեկտների վարքի և գործունեության միջև: Դրանով իսկ բարձրանում է սահմանադրական նորմերի գործողության և իրագործման արդյունավետության աստիճանը:

Ժամանակակից իրավական հետազոտություններում ներկայացված է սահմանադրական նորմերի մեկնությունների բնույթն ու ընթացքը բնորոշող անվանումների ողջ լայն շրջանակը[1]: Մեր հոդվածում «սահմանադրական հերմենևտիկան», «սահմանադրության մեկնություն», «սահմանադրության ինտերպրետացիա», «սահմանադրական մեկնաբանումներ» տերմիններն օգտագործվում են մեկ ընդհանուր հասկացողական շարքում:

«Սահմանադրության մեկնում», «սահմանադրական վերահսկողություն», «սահմանադրական արդարադատություն», «իրավական ակտերի սահամանադրականության դատական վերհսկում» եզրույթների օգտագործումը հաճախ պայմանավորված է հետազոտության օբյեկտի

---

[1] *Գիտության մեջ կան հետազոտություններ՝ նվիրված ինչպես սահմանադրական վերահսկողության տեսությանն ու պրակտիկային, այնպես էլ սահմանադրական դատավարության (արդարադատության) կազմակերպմանն ու գործունեությանը: Տես՝* ***Հարությունյան Գ.****, Սահմանադրական իրավունք,* ***Витрук Н. В.,*** *1. Конституционное правосудие: судеьное конституционное право и процесс. М., 1998; 2. Конституционное правосудие в России* ***(1991-2001 гг.):*** *Очерк теории и практики. М., 2001;* ***Кряжков В. А., Лазарев Л. В.****, Конституционная юстиция в Российской Федерации: Учебное пособие. М., 1998;* ***Кряжков В. А.****, Конституционное правосудие в субъектах Российской Феедерации (правовые основы и практика). М., 1999;* ***Митюков М А., Барнашов А. М.,*** *Очерки конституционного правосудия (сравнительно-правовое исследование законодательства и судебной практики). Томск, 1999;* ***Несмеянова С. Э.****, Конституционное правосудие в Российской Федерации. Екатеринбург, 2000;* ***Шульженко Ю. Л.****, Конституционный контроль в России. М., 1995 և այլն:*

առանձնահատկությամբ: Դրանք միանման չեն իրենց ծավալով և տարբեր կողմերից են բնութագրում սահմանադրության մեկնման հետ կապված իրավական իրականությունը: Կոնկրետ երկրում դրանց հարաբերակցության և օգտագործման հաճախականության վրա ազդում է իրավական և դատական այն համակարգի տեսակը, որի շրջանակներում իրականացվում է իրավական գործունեության տվյալ տեսակը:

Սահմանադրական նորմերի բովանդակությունը և դրա կողմից սահմանվող սահմանափակումները իշխանությունների լիազորությունների, մարդկանց իրավունքների և ազատությունների վերաբերյալ կարող են տարբեր լինել: Սակայն ցանկացած սահմանադրություն, անշուշտ, ներառում է նաև տեքստ: Իսկ սահմանադրությունը, որպես գրավոր տեքստ, անկախ իր բովանդակությունից, ենթադրում և պարտադրում է մեկնության գործընթացի մեջ մտցնել ինչպես սահմանադրական իրավունքի տեսության կատեգորիաներ, այնպես էլ հերմենևտիկայի որոշակի փիլիսոփայություն, որը փորձում է անբացատրելի պայմաններ գտնել բոլոր տեքստերը հասկանալու համար[1]:

Գրավոր սահմանադրության առկայությունը սահմանադրական հերմենևտիկայի տեսության և պրակտիկայի անհրաժեշտ, սակայն ոչ ամբողջապես բավարար նախապայմանն է: Սահմանադրությունը միշտ գործում է որոշակի իրավական համակարգի և սոցիալական միջավայրի պայմաններում: Այն կարող է լինել սոցիալական վերափոխումների գործոն կամ շատ քիչ կիրառվող և նույնիսկ ընդհանրապես չկիրառվող հռչակումների հավաքածու: Իրավական համակարգի և ընդհանրապես ողջ հասարակության վրա սահմանադրության ակտիվ ներգործությունն է, որ ձևավորում է սահմանադրական մեկնության պահանջարկը՝ հատկապես պետության և իրավունքի վերափոխման դինամիկ անցումային ժամանակաշրջանում: Դա առանցքային պայման է սահմանադրական կոնֆլիկտների խաղաղ լուծման և համաձայն սահմանադրական նոր սկզբունքների ու սահմանադրական նոր գաղափարների իրավական համակարգի կայուն վերափոխման համար: Հիմնականում դրանով է բացատրվում սահմանադրության պաշտոնական համապարտադիր և կազուալ կամ միայն կազուալ մեկնաբանման ինստիտուտի այդչափ մեծ տարածումը ետսոցիալիստական պետությունների մեծ մասում:

Իրավական համակարգի վրա ապակայունացնող ազդեցություն գործող սահմանադրական սկզբունքների մեկնաբանությունը, որպես կանոն,

---

[1] *Դրա հետ մեկտեղ Գ, Էյը որպես սահմանադրական հերմենևտիկայի անհրաժեշտ նախադրյալ նշում է «գրավոր դիսկուրսը» («written discourse»):*

պայմաններ է նախապատրաստում սահմանադրական լուրջ բարեփոխումների կամ սահմանադրության մասնակի փոփոխությունների համար: Իրավական համակարգի համար կայունացնող դերակատարություն ունեցող սահմանադրական մեկնությունները նպաստում են սահմանադրական սկզբունքների կենսագործմանը, տարածում են սահմանադրության գործողությունը իրավունքի բարեփոխվող ճյուղերում, վերափոխում են հասարակական գիտակցությունը և ընդհանուր առմամբ ծառայում են առավել կարևոր և սահմանադրորեն նշանակալից հարցերով հասարակական և մասնագիտական (իրավաբանական) ընդհանուր հայտարարի գալու նպատակին, այդ թվում նաև հերմենևտիկ ջանքերի օգնությամբ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների արդյունքում եզրահանգում ենք, որ կարելի է առանձնացնել սահմանադրական մեկնաբանման պահանջարկ ծնող հետևյալ հանգամանքները.

1. գրավոր սահմանադրության առկայություն, որը կատարում է հասարակական հարաբերությունների և սոցիալական վերափոխումների ակտիվ իրավական կարգավորիչի գործառույթ,

2. սահմանադրության նորմերի և քաղաքական-իրավական իրողության միջև ճեղքվածքի առաջացում, ինչը պահանջում է հարմարեցնել սահմանադրական դրույթները փոփոխված *հասարակական հարաբերություններին,*

*3.* իրավունքի սուբյեկտների մոտ սահմանադրական դրույթների ոչ ադեկվատ ընկալում և հասկացում, ինչը կարող է հանգեցնել իրավաբանական կոնֆլիկտների և սահմանադրական օրինականության միասնականության խախտման,

4. սահմանադրությանը երկարատև կյանք և նրա զարգացմանը շարունակական բնույթ ապահովելու ձգտումը[1]:

Ըստ մեր տեսանկյան, սահմանադրական մեկնման իրավաբանական նպատակներն ու հնարավորությունները ներառում են իրավական համակարգի տարբեր տարրեր, սակայն, առաջին հերթին, դրանք ներգործում են սահմանադրական իրավունքի և սահմանադրական քաղաքականության ոլորտի վրա: Կարելի է առանձնացնել հետևյալ

---

[1] *ԱՄՆ -ի Գերագույն դատարանի դատավորների կողմից Սահմանադրության մեկնման տարբեր մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս հարմարեցնել նորմերը ժամանակակից պահանջներին և ապահովել նրա կենդանի գոյությունը արդեն քանի սերունդ: Սահմանադրական, մեկնությունների տարբեր ձևերի ու մեթոդների («forms» or «modalities») մասին աձս Fallon R. H.* ***A constructivist coherence theory of constitutional interpretation // Harvard Law Revew. 1987. Vol. 100. N 6, p. 1189-1209***

նպատակները և հնարավորությունները.

1. սահմանադրական նորմերի և իրավունքի այլ ճյուղերի նորմերի համակարգված կապերի բացահայտում,

2. սահմանադրական նորմերի զարգացման և հստակեցման հարցերով օրենսդիրների հնարավորությունների պարզում.

3. սահմանադրության ուղղակի գործողության կանոնների մշակում և դրա սահմանների հստակեցում,

4. վարույթի տարբեր առարկաների մեջ մտնող հարցերի կարգավորման ծավալի բացահայտում,

5. պետության սահմանադրական և օրենսդրական քաղաքականության հիմնական ուղղությունների պարզաբանում (բացահայտում):

Այսպիսով, սահմանադրական հերմենևտիկայի քաղաքական նպատակներն ու հնարավորությունները շոշափում են հանրային քաղաքականության տարբեր մակարդակներ և ընդհանուր առմամբ հակազդում են ծայրահեղական գործիքայնությանը հանրային իշխանության կազմակերպման և իրականացման գործում: Առավել կարևոր է այն հանգամանքը, որ սահմանադրական մեկնությունները նպաստում են հակամարտող քաղաքական խմբերի ու շահերի համաձայնեցմանն ու հաշտեցմանը և ապահովում են քաղաքական կոնֆլիկտների քաղաքակիրթ լուծումը: Պակաս կարևոր չէ նաև այն, որ այդ գործընթացի իրականացման ժամանակ համաչափվում են սոցիալական տարբեր խավերի, քաղաքական և մասնագիտական խմբերի կողմից որդեգրված քաղաքական ու այլ արժեքներ և՛ քննարկման և՛ մեկնաբանման ճանապարհով կատարվում է դրանց հիերարխիայի փոխհամաձայնեցված լեգալացում: Սահմանադրական նորմերի մեկնաբանման սոցիալական նպատակներն ու հնարավորություններն ուղենիշ են ծառայում հասարակական հարաբերությունների ողջ համակարգի համար: Դրա օգնությամբ է կատարվում հասարակության տարբեր ենթահամակարգերի ավելի ընդ-հանուր և բազմակողմանի կարգավորումը, հանրության ամբողջականու-թյան և նրա առանձին մասերի զարգացումների միջև հավասարակշռության պահպանումը:

## Գրականություն


1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը,
2. **Грейс Р.,** Мифы Древней Греции / Под ред. и с послесл. А.А: Тжо – г. 1992.
3. **Inwood M.** Hermeneutics // Routledge Enciclopedia of Pilosophy CD-ROM / General Editor Ed. Craig. Version 1.0

London, 1998; Palmer R. E. Hermeneutic: Interpretation theory in :JSchleiermacher, Dilthey, Heidegger, and Gadamer. Evanston, 1969.

4. **Leyh G.**, Toward a Constitutional Hermeneutics // American Jomal of Political Science/ 1988.vol 32.
5. **Суслов В. В.,** Герменевтика и юридическое толкование // Государство и право. 1997, N 6.
6. **Goodrich P.**, Legal hermeneutics // Routledge Enciclopedia of Pilosophy CD-ROM; Legal Hermeneutics: History, Theory, fnd Pracvtice / Ed. by G. Leyh. Los Angeles; Berkeley (CA), 1992.
7. **Васьковский Е. В.**, Цивилистическая методология. Ч. 1: Учение о толковании и примении гражданских законов. Одесса, 1901; М., 2002; **Градовский А. Д.**, О судебном толковании законов по русскому праву 7/ Собр. соч. Т. 7. СПб, 1907, с. XXI-LVIII; Коркунов Н. М. Лекции по общей теории права. 8-е изд. СПб., 1909.
8. **Венгеров А. Б.**, О прецеденте толкования правовой нормы // Ученые записки ВНИИСЗ. Вып. 6. М., 1966, с. 3-8; Вопленко Н. Н. Официальное толкование норм права. М., 1976; **Насырова Т. Я.** Телеологические (целевое) толкование советского закона. Казань, 1988; **Пиголкин А. С.**, Толкование нормативных актов в СССР. М., 1962; **Черданцев А. Ф.**, Толкование советского права. М., 1979.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը։